# ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (1918 Թ.)

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ.

*Արցախի հիմնահարցի 1918 թ. պատմությանը բազմիցս անդրադարձել են շատ հայ հեղինակներ*[1]*, որոնց աշխատանքներում կամա թե ակամա տեղ են գտել բացթողումներ, կամ էլ առանձին հարցեր դուրս են մնացել ուշադրությունից: Դա, ըստ էության, հետևանք է արխիվային հենքի անբավարարության, հեղինակների շտապողականության կամ փաստերի հակասության:*

*Արցախահայության առաջին համագումարը տեղի է ունեցել 1918 թ. հուլիսի 22-26-ին Շուշիի թեմական դպրոցի դահլիճում: Հարություն Թումյանը նշել է, որ համագումարին մասնակցել է 180 պատգամավոր*[2]*, իսկ Եղիշե Իշխանյանը՝ 60*[3]*: 21 գյուղախմբային հասարակության կողմից ուղարկված 42 պատգամավորին գումարվել են Շուշիից ութ պատգամավոր, քաղաքական հինգ կուսակցություններից՝ յուրաքանչյուրից երկուական պատգամավոր: Այսպիսով, ստացվում է 60 պատգամավոր: Եղ. Իշխանյանը նաև բացատրել է, որ համագումարին «խորհրդակցական ձայնով մասնակցում էին միջկուսակցական բյուրոյի բոլոր անդամները, նաև «մի քանի ինտելիգենտներ զանազան կուսակցութեանց պատկանող, բայց պաշտօնական հանգամանք չունեցողներ»*[4]*: Գրիգոր Հովհաննիսյանը գրել է, թե Ղարաբաղի հայության առաջին համագումարի «յուրաքանչյուր գյուղից մասնակցում էր մեկական պատգամավոր»*[5]*: Փաստորեն, նա*

---

[1] *Տե՛ս* Լեո, *Անցյալից, Ե., 2009,* Վրացյան Ս., *Հայաստանի Հանրապետություն, Ե., 1998,* Խատիսեան Ա., *Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, 1930,* Սիմոնյան Հ., *Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Ե., 1996,* Իշխանյան Ե., *Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Ե., 1999,* Թումյան Հ., *Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ., պատմական ակնարկ, Ե., 2008,* Գալոյան Գ., *Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999,* Հովհաննիսյան Գ., *Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Ե., 1971,* Կիսիբեկյան Ա., *Հուշեր, գիրք առաջին, Ե., 2011,* Արամայիս (Միսակ Տեր-Դանիելյան), *Ղարաբաղի տագնապը, Ե., 2011,* Ուլուբաբյան Բ., *Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994,* Աբրահամյան Հ., *Մարտնչող Արցախը, գիրք Ա, 1917-1923 թթ., Ե., 2003,* Հարությունյան Հ., *Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Ե., 1996,* Բալայան Վ., *Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ե., 1912,* Дадаян С. *Факты и вымыслы политической истории Нагорного Карабаха (1918-1923), Степанакерт, 2016;* Туманян М. *Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Е., 2012;* Махмурян Г. *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920. Время белого человека, Е., 2002 և այլն:*

[2] Թումյան Հ., *նշվ. աշխ., էջ 101:*

[3] Իշխանյան Ե., *նշվ. աշխ., էջ 172: Ե. Իշխանյանը տողատակում բացատրել է, որ «ըստ ընտրական հրահանգի, յուրաքանչյուր գյուղախմբային հասարակություն ուղարկել է 2-ական պատգամավոր»: Այն ժամանակ Արցախը բաժանված էր 22 գյուղախմբի, որից պատգամավորներ են ուղարկվել 21-ը:*

[4] *Նույն տեղում, էջ 172: Աղբյուրներից մեկում ակնարկ կա, թե համագումարին իր կամքով մասնակցել է թրքախոս մահմեդական սոցիալ-դեմոկրատ Լյուֆթալի Բեհբուդովը, որին մուսավաթականները սպանել են 1918 թ. սեպտեմբերին ոչ այն է Աղդամում, ոչ այն է հայկական Քյաթուկ գյուղի մոտ, ուր գնում էր հայերի հետ բանակցելու:*

[5] Հովհաննիսյան Գ.Ա., *նշվ. աշխ., էջ 84:*

ժխտում է Եղ. Իշխանյանի հաղորդումը, որ, հրահանգի համաձայն, յուրաքանչյուր գյուղախմբային հասարակություն ընտրել էր երկուական պատգամավոր: Կարծում ենք, որ Գ. Հովհաննիսյանը ճիշտ չէ:

Խնդրի առնչությամբ հարց է առաջանում. ինչո՞ւ այլազգի որևէ ներկայացուցիչ համագումարին չի մասնակցել, չէ՞ որ 1918 թ. հուլիսի տվյալներով Ղարաբաղում բնակվող բնակչության 6 տոկոսը այլազգի էին՝ թրքախոս մահմեդականներ, ռուսներ, քրդեր և այլն: Մինչդեռ եթե ոչ պատգամավորի, թեկուզ հյուրի կարգավիճակով կարող էին նրանց ներկայացուցիչները մասնակցել: Սակայն ինչո՞ւ է դա բացառվել: Այդ հարցը չի անհանգստացրել վերոնշյալ ոչ մի հեղինակի:

Առաջին համագումարի նախօրյակին հարաբերությունները բավական սրվել էին հայերի և թրքախոս մահմեդականների միջև: «Մուսավաթ» և «Իթթիհատ» ազգայնամոլ կուսակցությունները, ելնելով իրենց ցեղային ձգտումներից և քաղաքականությունից, մուսուլմանների շրջանում ընդլայնել էին քարոզչությունը և կոչ էին անում զինվելու, ազգային ջոկատներ կազմակերպելու և հայերին ստիպելու հեռանալ իրենց պատմական հայրենիքից: Այդ հողի վրա էլ 1917 թ. երկրորդ և 1918 թ. առաջին կեսերին խստորեն սրվել էին հայ-թուրքական հարաբերությունները, ավելացել էին գողությունները, ավազակությունները, մարդասպանությունը, հաճախա-կի փակվում էին Եվլախ-Շուշի և Շուշի-Գորիս ճանապարհները: Առանձնապես սուր վեճեր և ընդհարումներ էին տեղի ունենում քոչվորների և տեղաբնակների միջև: Նույնիսկ մահմեդական գյուղացիներին կոչ էին անում հրաժարվել հայերին սննդամթերք վաճառելուց: Օրինակ՝ 1919 թ. հունվարի 15-ին Աղդամում տեղի ունեցած թրքախոս մահմեդականների համագումարը որոշում է ընդունում հայերին բոյկոտ հայտարարել[6]:

Թվում է, թե 1917 թ. դեկտեմբերի 25-ին Շուշիի հասարակական ակումբում տեղի ունեցած հասարակության ժողովում ստեղծված հայ-թուրքական կոմիտեն կնպաստեր երկու ժողովուրդների միջև հարաբերությունների ամրապնդմանը, լայնորեն պայքար կծավալեր անիշխանության և անօրինությունների դեմ: Սակայն ո՛չ այդ կոմիտեն և ո՛չ էլ 1918 թ. ապրիլի 2-ին, մայիսի 14-ին և մայիսի 25-ին Ասկերանում տեղի ունեցած հայ-թուրքական համագումարները[7] չկարողացան վճռել ո՛չ պարենավորման, ո՛չ քոչի, ո՛չ չարաշահության, ո՛չ բոյկոտի, ո՛չ ճանապարհներն ապահով դարձնելու և ո՛չ էլ մյուս հարցերը:

Կար նաև այլ հարց. 1917 թ. դեկտեմբերի 16-ին սպա Նիկոլայ Իսախանյանի նախաձեռնությամբ կազմվել էր Հայ զինվորականության միության Ղարաբաղի ճյուղը, որը ստեղծեց 150-հոգանոց վաշտ: Այն պետք է տեղակայվեր դեռևս XIX դարի քառասնական թվականներին Շուշիում և Վարարակում (Խանքենդի) կառուցված զորանոցներում: Թիֆլիսի զինվորական շտաբի դեկտեմբերի 21-ի կարգադրությամբ Հայ

---

[6] Սողոմոնյան Ս., *Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում (տե՛ս Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու, N 7, Ե., 1967), էջ 153:*

[7] Իշխանյան Ե., *նշվ. աշխ., էջ 130, 145 և 148:*

զինվորականության միության Շուշիի ճյուղին էր հանձնվել Շուշիի գավառի զինվորական շենքերի և այլ գույքի պահպանությունը: Այս հանգամանքը խստորեն վրդովեցրել էր քաղաքի թրքախոս մուսուլմաններին, քանի որ նրանք մտադիր էին այդ զորանոցներում տեղավորել իրենց ինքնապաշտպանական ջոկատները:

Թրքախոս մուսուլմանները դժգոհ էին նաև հայ քաղաքական կուսակցությունների՝ դեկտեմբերի 24-ին ստեղծած 14 հոգուց բաղկացած միջկուսակցական բյուրոյից, որն իր ձեռքում էր կենտրոնացրել երկրամասի օրենսդիր և գործադիր իշխանությունները: Այդ մարմինը ստեղծվել էր դաշնավարության սկզբունքով, այսինքն՝ անդամներ էին ընտրվել բոլոր հինգ քաղաքական կուսակցություններից: Դրան հավելենք նաև այն, որ Արցախի քաղաքական ուժերի միջև հաճախակի խախտվում էր հաստատված համերաշխությունը՝ թողնելով բացասական հետևանքներ: Դրանք կանխելու համար 1918 թ. հունիսի 15-17-ին տեղի ունեցած միջկուսակցական նոր հավաքը ստեղծում է «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»՝ կազմված յոթ անդամից և քարտուղարից, որոնցից չորսը՝ դաշնակցական, երկուսը՝ մենշևիկ, երկուսը՝ սոցիալ-դեմոկրատ[8]: Կառավարության կազմում ամբողջությամբ հայեր էին. դա ևս տեղի էր տվել թրքախոս մուսուլմանների դժգոհությանը: Թվարկված իրադարձությունների հետևանքով Շուշիի թրքախոս մահմեդականների անզատողական քարոզչության շնորհիվ քաղաքում ստեղծվել էր երկիշխանություն՝ հայկական և մահմեդական: Իսկ դա բավական բացասաբար էր ազդում քաղաքի և երկրամասի կյանքի վրա: Այս խնդիրները ևս դուրս են մնացել հայ հեղինակների ուշադրությունից:

Կան նաև արցախահայության առաջին համագումարին առնչվող այլ բնույթի բացթողումներ: Վահրամ Բալայանը գրում է. «1918 թ. հուլիսին, ի դեմս Լեռնային Ղարաբաղի, Անդրկովկասում գործում էր չորրորդ սուվերեն հանրապետությունը[9]»: Խոսք չկա, լավ ցանկություն է: Սակայն կամա թե ակամա հեղինակը կրկնել է թրքախոս մահմեդական մուսավաթ հեղինակ Իբրահիմովին, թե հայկական գործիչները պայքարում են՝ ստեղծելու «Карабахская (Шушинская) Республика» [10]: Նա մեկ ամիս անց հեգնանքով գրում է. «Когда армяне были заняты созданием Карабахской Республики...», ապա նրանց հրավիրած համագումարը հայտարարում է «Карабахскую Республику и распредел[яет] административные должности», և որ «Правительство было создано исключительно дашнакцаканское...»[11]: Այս վերջին արտահայտությունը ճշմարտության խեղաթյուրում է և միանգամայն դատապարտելի: Վերևում նշվել է Արցախի առաջին կառավարության կազմի մասին: Իսկ մեկ ամիս անց տեղի ունեցած առաջին համագումարի նորընտիր կառավարությունն ունեցել է հետևյալ կազմը՝ երեք դաշնակցական, մեկ մենշևիկ, մեկ սոցիալ-հեղափոխական և

---

[8] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 26:

[9] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 85:

[10] Азербайджан (Баку), N 4, 25.09.1918.

[11] Նույն տեղում, N 14, 21.10.1918.

*երկու անկուսակցական[12], սեպտեմբերի 8-10-ը տեղի ունեցած երկրորդ արտահերթ համագումարում կառավարության կազմում ընտրվել են հինգ դաշնակցական, մեկ սոցիալ-հեղափոխական, մեկ կադետ, մեկ սոցիալ-դեմոկրատ և մեկ չեզոք[13]: Ինչպես տեսնում ենք, երեք դեպքում էլ կառավարությունը դաշնավարային էր, որին մասնակցել են տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ: Դաշնակցական կուսակցության անդամների մասնակցությունը միշտ էլ գերակշռել է, որովհետև այն քանակով զգալիորեն մեծ էր: Եթե բոլշևիկների և կադետների կուսակցությունների անդամների թիվը չէր անցնում տասից, ապա դաշնակցական կուսակցության թիվը գերազանցում էր մի քանի հարյուրը:*

*Վ. Բալայանը նաև գրում է, թե արցախահայության առաջին համագումարն ստեղծում է Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն: Սա կոպիտ սխալ է: Համագումարն Ազգային խորհուրդ չի ընտրել, այլ ընտրել է կառավարություն: Միայն արցախահայության երկրորդ արտահերթ համագումարը (1918 թ., սեպտեմբերի 8-10) որոշել է Ղարաբաղի Ժողովրդական կառավարությունը վերանվանել Ղարաբաղի Հայոց Ժողովրդական խորհրդի: Ըստ էության, Վ. Բալայանը Ղարաբաղի հայության առաջին համագումարի կողմից կառավարություն և Ազգային խորհուրդ ընտրելու վերաբերյալ գաղափարը վերցրել է Գրիգոր Հովհաննիսյանից. ,Համագումարը, ազգայնական ուժերի մտցրած առաջարկի համաձայն, Լեռնային Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց ազգային խոր-հուրդ և 7 հոգուց կազմված Հայկական Ղարաբաղի Ժամանակավոր կառավարությունե[14]: Հեղինակը որպես աղբյուր վկայում է ,Մշակե թերթի 1918 թ. հուլիսի 25-ի թիվ 144-ը: Սակայն թերթի այդ համարում նման բան չկա: Վ. Բալայանն էլ, առանց Գ. Հովհաննիսյանի մատնանշած աղբյուրը ստուգելու, նույնությամբ կրկնել է: Թուրքիան 1918 թ. ապրիլին իր 45 դիվիզիայից 10-ը կենտրոնացրել էր Կովկասյան ռազմաճակատում: Արդեն մայիսի 27-ին, Անդրկովկասի սեյմի լուծարման օրերին, թուրքական բանակի շտաբը՝ Նուրի փաշայի հրամանատարությամբ, մտնում է Գանձակ, իսկ հունիսի 5-ին այնտեղ է հասնում 5-րդ բանակը՝ Մյուսել փաշայի հրամանատարությամբ[15]: Հունիսի 17-ին Նուրի*

---

[12] Աբրահամյան Հ., *նշվ. աշխ., էջ 51,* Իշխանյան Ե., *նշվ. աշխ., էջ 177:*

[13] Իշխանյան Ե., *նշվ. աշխ., էջ 203:*

[14] Հովհաննիսյան Գ., *նշվ. աշխ., էջ 84:*

[15] *Սփյուռքահայ հեղինակ Պետրոս Զարդարյանը բացատրել է, որ, ընդհանրապես, Ադրբեջան երկրի գաղափարը գոյություն չի ունեցել, այն ստեղծել են պան-թուրքական և պանթուրանական տեսաբանները, որոնք, XIX դարի վերջին տասնամյակից սկսած, «իրենց բազմաթիվ գործակալներու ջանքերով սկսան «ազրպէյճանցի ազգ», «Ազրպէյճան» երկիր հասկացութիւնները տարածել Հարաւ-արեւելյան Կովկասի թրքախօս մահմեդական բնակչութեան … մեջ»: Այդ նրանք «կազմակերպեցին 1905-1906-ի հայկական կոտորածները» Կովկասի հայաբնակ տարածքներում» (*Պետրոս Զարդարեան, *«Թուրք ազգ» մը գոյութիւն ունի՞ արդեօք», Սթոքհոլմ, 1998, էջ 27): Նա շարունակում է, որ «ազրպէյճանցի ազգ» և «Ազրպէյճան» երկրի պնդումները ավելի գործնական «գետնի վրայ բերուեցան մանաւանդ 1918-ի երկրորդ կէսին, երբ օսմանեան բանակը գրաւեց Հարաւային Կովկասի գրեթէ ամբողջութիւնը… Այդ օրերին է, որ ծնունդ առաւ այսպէս կոչուած «Ազրպէյճանի Հանրապետութիւնը»: Երբ թուրքական բանակը, Պարսկաստանի և*

*փաշայի գլխավորությամբ ստեղծվում է «Մուսուլմանական ազգային խորհուրդ»՝ Խան-Խոյսկու գլխավորությամբ: «Իսլամի բանակ» ստեղծելու համար մոբիլիզացվում է նախկին Ելիզավետպոլի նահանգի բնակչությունը, և տեղերում նշանակվում են թուրք-պարետներ*[16]*: Աղդամում պարետ է նշանակվում տաճիկ Իսմայիլ Հաքքը բեյը, Շուշիում՝ Հասան Բասրը բեյը, որին փոխարինել է Խոսրով բեկ Փոլատովը*[17]*, Կարյագինոյում՝ Քյազըմ բեյը, որը մինչ այդ պարետ էր Աղդամում և այլն: Գանձակի թուրքերը ստիպում էին արցախահայությանը կատարել իրենց բոլոր հրամանները, հակառակ դեպքում սպառնում էին ,Իսլամի բանակըէ մտցնել երկրամաս: Նախքան դրան դիմելը Նուրի փաշան Շուշի է ուղարկում մի պատվիրակություն հետևյալ կազմով՝ Խորեն Համասփյուռի (ՀՅԴ) և Գևորգ Մելիք-Շահնազարյան (էսէռ): Պատվիրակությունը, հուլիսի 19-ին հասնելով Շուշի, Արցախի իշխանություններին է ներկայացնում Նուրի փաշայի պահանջը՝ Ադրբեջանի իշխանությանն ընդունել այնպես, ինչպես ընդունել են Գանձակի հայությանը: Վրդովված Արցախի Կոմիսարների խորհրդի պահանջով՝ քաղաքի հայության հետ պատվիրակության շփումը բացառելու համար նրանց արգելափակում են «Մարդին» հյուրանոցում: Արցախի իշխանությունները մերժում են Նուրի փաշայի անօրեն պահանջը՝ նշելով, որ «Մենք մեզ կառավարում ենք և չենք ուզում ճանաչել Ադրբեջանի իշխանութիւնը»*[18]*:*

*Այսպիսով, Նուրի փաշայի ուղարկած պատվիրակությունը ձեռնունայն վերադառնում է Գանձակ՝ առանց որևէ շփում ունենալու արցախահայության հետ: Արցախցիների պատասխանը վրդովում է տաճիկ փաշային. նրա հրամանատարությամբ բարբարոս ուժերը սեպտեմբերի 15-ին ներխուժում են Բաքու՝ երեք օր շարունակ ցեղասպանության ենթարկելով տեղի հայությանը: Այդ վայրագության հետևանքով զոհվում է 30 հազար հայ*[19]*: Արցախ-զանգեզուրցիները, տեղեկանալով այդ մասին, լցվում են վրեժխնդրությամբ: Զոհվածները հիմնականում ծննդով արցախցիներ և զանգեզուրցիներ էին: Բաքվի ցեղասպանությունից հետո Նուրի փաշան շտապում է Ղարաբաղ: Արդեն Աղդամում էր Անդրկովկասում թուրքական առաջին դիվիզիան՝ չերքեզ Ջամիլ Ջահիդ բեյի հրամանատարությամբ: Նուրի փաշան, Գանձակից ժամանելով Աղդամ, իր հետ տանում է նոր պատվիրակություն՝ Լևոն վարդապետ Փսերյան և Գանձակի Հայոց Քաղաքացիական կոմիտեի անդամ Սարգիս (Սերգեյ) Տեր-Իսրայելյան (էսէռ): Շուշի մեկնած պատվիրակությունը փաշայից հանձնարարություն ուներ արցախահայերին ստիպել իրենց կապերը խզել Սյունիքում գտնվող զորավար Անդրանիկի հետ և առանց*

---

*Ղարաբաղի վրայով հասել էր Գանձակ (Գյանջա), նրա հրամանատար Նուրի փաշան տարածքը Պարսկաստանի Հյուսիսային Ադրբեջան գավառի անունով ժամանակավորապես կոչեց Ադրբեջան, որն էլ այդպես մնաց:*

[16] Токаржевский Е.А. *Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, с. 95-97.*

[17] Իշխանյան Ե., *նշվ. աշխ., էջ 194, 232, 243:*

[18] *Նույն տեղում, էջ 194:*

[19] Իշխանյան Բ., *Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 32:*

*որևէ առարկության ենթարկվել Ադրբեջանի կառավարությանը: Այդ օրերին (1918 թ. սեպտեմբերի 18-22-ը) ընթանում էր արցախահայության երրորդ համագումարը: Արցախի իշխանությունները պատվիրակությանը նույնիսկ թույլատրում են մասնակցել համագումարի նիստերից մեկին: Այնուամենայնիվ, քաղաքի զայրացած հայերը պատվիրակությանը մեղադրում են հայ ժողովրդին դավաճանելու և թրքախոս մուսուլմաններին ծախված լինելու համար:*

*1918 թ. սեպտեմբերի 20-ին, արցախահայության երրորդ համագումարի օրերին՝ Բաքվից Արցախ է գալիս նոր պատվիրակություն, որը նույնպես տաճիկներն էին ուղարկել: Աղբյուրներում նշված չեն պատվիրակության անդամների անունները: Սակայն նրանք ծնունդով արցախցիներ էին, որոնք Բաքվի բանվորներից էին: Նրանք կոտորածի վերջին օրը բանտարկվել էին ու տաճիկ ասկյարների հսկողությամբ ուղարկվել Շուշի՝ արցախահայությանը հաղորդելու, որ Բաքվի հայերն ընդունել են թուրքական իշխանությանը, նույնը պիտի կատարեն նաև իրենք: Տվյալներ կան, որ Բաքվի հայերը նրանց Արցախ ճանապարհելու ժամանակ հանձնարարել են արցախահայերին հասկացնել, որ չհանձնվեն ու չընդունեն թուրքերի պահանջը և շարունակեն դիմադրություն ցույց տալ: Պատվիրակությունը քաղաքի հայ հասարակության հետ հանդիպում է հասարակական ակումբում, պատմում Բաքվում տեղի ունեցած վանդալիզմի մասին և նրանց հաղորդում Բաքվի հայության հանձնարարությունը: Ահա այս պատվիրակությունն է, որ հայ հեղինակները չեն նկատել:*

*Խնդրո առարկա հեղինակների ուսումնասիրություններում տարաձայնություններ կան 1918 թ. սեպտեմբերի 26-ին Շուշի ներխուժած թուրք-մուսուլման-մուսավաթական բարբարոսների թվի վերաբերյալ[20]: Ոմանք այն հասցնում են մի քանի հազարի: Ակնհայտ է, որ թուրքերը Ղարաբաղ են մտել այն նվաճելու և Ադրբեջանին հպատակեցնելու համար: Երբ մոտ 1500 ասկյարից կազմված բա-նակը Ջամիլ Ջահիդ բեյի գլխավորությամբ[21] Շուշի մտավ, քաղաքի թուրքերը նրանց դիմավորեցին ցնծությամբ[22]: Սակայն նրանք չկա-րողացան Աղդամ-Շուշի խճուղուց այս կամ այն կողմ անցնել[23]: Նուրի փաշան ընդունել էր արցախահայության պահանջը՝ «դարա-փափախավորները» (ազերիները) չմտնեն քաղաք, բացի թուրքերի կանոնավոր զորքերից[24], որոնց թիվը, Նուրի փաշայի պնդումով, 2-3 հազարից պակաս չպետք է լիներ[25]: Արցախ ներխուժած թուրքական ուժերն այնտեղ մնացին 22 օր՝ թե՛ քաղաքի և թե՛ մերձակա գյուղերի բնակիչների հանդեպ կատարելով վայրագություններ[26]: Վերոհիշյալ հեղինակները չեն անդրադարձել Շուշի մտած տաճիկների թվին: Իսկ Շուշին գրավելուց մի քանի օր անց վանդալները*

---

[20] Իշխանյան Ե., *նշվ. աշխ., էջ 194, 220-224:*

[21] Աբրահամյան Հ., *նշվ. աշխ., էջ 69-70:*

[22] *ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 27:*

[23] Վրացյան Ս., *նշվ. աշխ., էջ 329:*

[24] Թումյան Հ., *նշվ. աշխ., էջ 165:*

[25] *Նույն տեղում, էջ 165:*

[26] *Նույն տեղում, էջ 164:*

փորձում են գրավել նաև ողջ երկրամասը: Առաջինը զորք են ուղարկում Ջրաբերդ: Ոմանք նշում են, որ Ջրաբերդի հերոսամարտը տեղի է ունեցել երկու, ոմանք էլ՝ երեք անգամ: Իրականում այն տեղի է ունեցել հոկտեմբերի 5-ին և 13-ին: Այդ հերոսամարտի մասին պատմել է Դավիթ Անանունը 1919 թ. փետրվար և մարտ ամիսներին «Մշակ» թերթում տպագրած «Ղարաբաղ» վերնագրով ճանապարհորդական նկարագրությունում, որը, սակայն, վրիպել է մի շարք հեղինակների ուշադրությունից:

Այդ իրադարձությունների առնչությամբ՝ որոշ հեղինակներ նշում են Շուշիում թուրքերի ձերբակալած հայ մտավորականների թիվը: Ոմանք՝ 50, ոմանք՝ 60, ոմանք էլ՝ 70: Իրականում ձերբակալվածների ցուցակը լրիվ չի պահպանվել: Ձերբակալություն-ները սկսվել են 1918 թ. հոկտեմբերի 1-ից՝ իբրև մի քանի հայի կողմից թուրքական հրամանատարությանը ներկայացրած ցուցակի համաձայն: Ըստ Եղ. Իշխանյանի՝ ձերբակալվել և բանտ է նետվել 51 հոգի: Հ. Թումյանը ձերբակալվածների թիվը նշում է 70[27], Հ. Հարությունյանը՝ 60[28], Բաքվի հայոց ազգային խորհուրդը՝ 60 հոգի[29]: Մեր կարծիքով, ճշմարտությանը մոտ է 50 թիվը:

Երկրամասը տնտեսապես քայքայված վիճակում էր, տիրում էր անիշխանություն, անօրենությունները սահմաններ չունեին, շատ քաղաքական և հասարակական գործիչներ հեռացել էին Բաքու, Թիֆլիս, Ռուսաստան, Միջին Ասիա և այլուր: Ամենուր երևում էր սովի ժանիքը: Գողություններն ու ավազակություններն օր օրի զլուխ էին բարձրացնում, վարակիչ հիվանդությունները համաճարակի էին վերածվում, ավելացել էին մարդասպանության դեպքերը: Այս ամենին վերջ տալու և երկրամասին առնչվող մի շարք հարցեր վճռելու համար հրամայաբար պահանջվում էր հրավիրել արցախա-հայության նոր՝ չորրորդ համագումար:

Արցախահայության պատմության իրավամբ այս ամենածանր ժամանակաշրջանում, մանավանդ 1918 թ. հոկտեմբերի վերջերին, երբ արդեն բանտից ազատվել էին բոլոր ձերբակալվածները, հոկտեմբերի 26-ին հրավիրվում է գաղտնի ժողով՝ Արցախի ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ, որն ընտրվել էր արցախահայության երկրորդ արտահերթ համագումարում: Հավաքում հաղորդվում է, որ բանտից ազատվածներն ստեղծել են մի գաղտնի մարմին, որը հարաբերությունների մեջ է մտել երկրամասի շրջանների հրամանատարների հետ: Այդ գաղտնի հավաքում հանգում են նրան, որ պետք է ստեղծել մի ղեկավար մարմին, որը կնախապատրաստի և առանց ուշացնելու, առնվազն 2-3 ամսվա ընթացքում, կհրավիրի արցախահայության չորրորդ համագումարը՝ վճռելու երկրամասին առնչվող բոլոր կենսական հարցերը:

Այսպիսով, 1918 թ. Արցախում տեղի ունեցած որոշ իրադարձություններ քննարկելու ընթացքում տեղ են գտել թերություններ, որոնք ճշտման և լրացման կարիք ունեն:

---

[27] Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 174:

[28] Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 62:

[29] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 22-23:

## К ИСТОРИИ АРЦАХСКОГО ВОПРОСА (1918 Г.)

АБРААМЯН Г. Б.

Резюме

В истории Арцахского вопроса есть множество пробелов, являющихся следствием поверхностного анализа архивных материалов, противоречивости фактов. Исторические события, имевшие место в Арцахе в 1918 г., нуждаются в более доскональном исследовании и ряде уточнений.

## ON THE HISTORY OF THE ARTSAKH ISSUE (1918)

H. ABRAHAMYAN

Abstract

There are many gaps in the history of the Artsakh Issue that are the result of a superficial analysis of archival materials, contradictory facts. Historical events that took place in Artsakh in 1918 need more thorough research and a number of refinements.